Համաշխարհային պատերազմը քայքայեց միլլիոնաւոր մարդկային կեանքեր և միաժամանակ ոչնչացրեց անհաշիւ հարստութիւններ, գիզւած տասնեակ տարիների յամառ աշխատանքով։ Այդ ոճրապարտ նպատակի համար՝ իշխող դասակարգերը զէնքի կանչեցին մօտ 35 միլլիոն մարդ։ Ֆրանսիան ոտքի հանեց 5 միլլիոն, Անգլիան 4 միլլիոն, Իտալիան 2 միլլիոն, Միացեալ-Նահանգները 1 և կէս միլլիոն, Ռուսաստանը 8 միլլիոն,

Աւստրո-Հունգարիան 3 և կէս մի
Գերմանիան 6 միլ. Թիւրքիան 1
կէս միլ., Ռումանիան 800,0
Բելգիան 600,000, Սերբիան մի մ
լիոնից աւելի զինուորներ։

Մինչև 1918 թ. *) յունուարը
լոր պատերազմող բանակները կոր
րին սպանուած, գերի, անհետ կոր
հիւանդութիւններից մեռած, ծա
վիրաւորուած, թեթև վիրաւորուած
այնպիսի վիրաւորներ, որոնք
նակի շարքերում են մնացել, ա
ւագն քսան հինգ միլլիոն մա
Հարիւր հազարաւոր թեթև վիր

*) 1919—20 թ. վերաբերեալ պ
տօնական տւեալները ձեռքի տ
չունենալով, օգտւում ենք 1918
թւերով որոնք աւելի քան պեր
խօս են...

Ծ. Խ.



ւորներ առողջանալուն պէս դարձեալ ուղարկեցին ճակատը, ուր վերջապէս նրանք մեռան։ Բոլոր երկիրներում սպանուածների և մեռնողների թիւը մինչև 1918 թ. յունուարի մէկը, ամենահամեստ հաշուով, հասնում է 6—7 միլիոն մարդու։ Այդ թիւն երեք անգամ աւելի շատ է, քան (1790—1815) 25 տարի տևող ֆրանսիական մեծ յեղափոխութեան պատերազմներում մեռնողների քանակը, և կրկինն է բոլոր այն պատերազմներում մեռնողների, որոնք տեղի ունեցան 1790-ից մինչև 1914 թիւը՝ այսինքն 125 տարուայ ընթացքում։

Ժամանակակից վիճակագրութիւնը կարող է քիչ թէ շատ ճշտութեամբ որոշել պատերազմի պատճառով կործանուած կեանքերի թիւը։

Բայց ժամանակակից գիտական միտքը ոչ միջոց չունի թէկուզ մօտաւորապէս հաշուելու նիւթական այն վնասները, որոնք առաջացել են ամբողջ քաղաքների ու գիւղերի, անտառների, այգիների, տներների, երկաթուղիների, անպէտքացած հազարաւոր վագոնների ու շոգեմեքենաների, ճարտարապետական ու գեղարուեստական հազւագիւտ-յիշատակարանների կործանումով։ Ցամենայն դէպս, մի քանի հաշիւների համաձայն, պատերազմը մարդկութեան վրայ արժել է մինչև 1918 թ. յունուարի 1-ը 600 միլիարդ ռուբլի, կամ 1500 միլիարդ ֆրանկ, ռուբլու և ֆրանկի նախապատերազմեան արժէքով։ Այդ ահագին գումարը գերազանցում է Անգլիայի, Գերմանիայի, Ֆրան-



սիայի, Ռուսաստանի, Աւստրիայի, Բելգիայի ամբողջ ազգային հարստութիւնը միասին վերցրած։

Առաւել ճշգրիտ կարելի է հաշուել եւրոպական պետութիւնների ելևմտական ծախսերը զինուորական կարիքների համար։ Պատերազմող պետութիւնները մինչև յունուարի 1-ը 1918 թ. անմիջականօրէն պատերազմական ծախսերի համար վատնել են 600 միլիարդ ֆրանկ։ Վերջին 125 տարիներում բոլոր պատերազմական ծախսերը (110 միլիարդ ֆրանկ) 5 և կէս անգամ աւելի քիչ են, քան այդ գումարը։

Պատերազմը Եւրոպայի պետական պարտքը հասցրեց մինչև 1000 միլիարդ ֆրանկի։ Այդ գումարի միայն տոկոսները տարեկան 60 միլիարդ ֆրանկ են։

Պատերազմի նիւթական արդիւնքները գլխաւոր պետութիւնների համար՝ արտայայտւում են հետևեալ թւերով։ Պատերազմի սկզբից մինչև հոկտեմբերեան յեղափոխութիւնը Ռուսաստանը ծախսել է 43 միլիարդ ռուբլուց աւելի։ Շնորհիւ այդ ծախսերի, ինչպէս և պատերազմի հետ կապւած այլ ծախսերի, անսովոր չափով աւելացաւ պետական պարտքը։ 1918 թ. յունւարի 1-ին ռուսական պարտքը հասաւ 80 միլիարդ ռուբլու։ Ցոյց տալու համար, թէ այդ թիւը որքան հսկայական է, յիշեցնենք, որ նախքան պատերազմը Ռուսաստանի ազգային հարստութիւնը գնահատւում էր 120 միլիարդ ռուբլի։ Հետևաբար, մինչև 1918-ի սկիզբը ռուսական պետական պարտքը



ազգային հարստութեան երկու երրորդական մասն էր կազմում։

Ֆրանսիան պատերազմի սկզբից մինչև 1918 թ. յունւարի 1-ը ծախսել է 102 միլիարդ ֆրանկ., այն է՝ իր ազգային հարստութեան մէկ երրորդից մի քիչ աւելի։

Անգլիայի պատերազմական ծախսերը նոյն ժամանակամիջոցում 6 միլիարդ անգլ. ոսկուց աւելի են, այն է՝ աւելի քան 60 միլիարդ ռուբլի, որ ամբողջ երկրի ազգային հարստութեան մի երրորդն է։

Գերմանիան նոյն շրջանում իբր միայն «պատերազմական ծախսեր» վատնել է 75 միլիարդ մարկ, որ նրա ազգային հարստութեան մի երրորդից քիչ պակաս է։

Առանձնապէս մեծ են Միացեալ Նահանգների պատերազմական ծախ-

սերը։ Նա վաստնել է և փոխատուութիւն է տուել դաշնակիցներին 2 և կէս միլիարդ դոլլար, այն է աւելի քան 60 միլիարդ ֆրանկ։ Այդ կերպով՝ Միացեալ Նահանգներն իրենց պատերազմի առաջին տարին համարեա 1 և կէս անգամ աւելի են ծախսել, քան Ռուսաստանը առաջին 3 և կէս տարիներում։

Պատերազմը բոլոր պատերազմող երկիրներում կործանել է արդիւնաբերութեան շատ ճիւղեր—հիւսւածքների, կօշկեղէնի, ցեմենտի, շինարարական և այլն։

Կործանւել են բամբակի և թղթի, հիւսւածքների արդիւնաբերութիւնները, կարծես փոթորկից քշւել անհետացել են գերմանական առևտրական նաւերը, ռուսական կամաւորական նաւատորմիղը, աւստրիական նաւերը...



Պատերազմի երկարաձգումը թէ կռւող և թէ չէզոք բոլոր երկիրներում առաջացրեց միևնոյն երևոյթը —կեանքի սարսափելի թանգութիւն, նիւթական անկում, որի հետևանքով մարդկութիւնը իսկական քաղցի նախօրեակին է, և ոչ միայն հացի, այլև տնտեսական կեանքի բոլոր ճիւղերում։ Հացի սով, բամբակի սով, ածուխի սով, սուր պակասութիւն միւս բոլոր կենսամթերքների՝ ոչ միայն Ռուսաստանի, Աւստրիայի, Իտալիայի և այլն ի՛ նման համեմատաբար յետամնաց երկիրներում, այլ և արդիւնաբերութեամբ ու գիւղատնտեսութեամբ ամենահարուստ Անգլիայում ու Ֆրանսիայում։ Մարդկութիւնն ուղղակի օդն էր ցնդեց-

նում միլիարդատեր տներով ածուխ, երկաթ, բամբակ և այլն՝ մի խումբ շահագործողների շահերի համար, և զարմանալի չէ, որ այժմ կանգնած ենք նիւթական անլուր աղքատացման նախօրեակին։

Ստորև տալիս ենք մի քանի շահեկան վիճակագրութիւններ.

## ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՄ

| | I տարի | II տարի |
|---|---|---|
| Անգլիա | 5,500 մ. ռ. | 10,000 մ. ռ |
| Ֆրանսիա | 6,800 » » | 9,750 » » |
| Ռուսաս. | 6,250 » » | 8,000 » » |
| Գերմա. | 8,500 » » | 12,500 » » |
| Ա.-Հունգ. | 5,500 » » | 6,000 » » |
| Իտալիա | 1,000 » » | 2,500 » » |
| Սերբ. և Բելգ. | 1,200 » » | 1,000 » » |
| Թիւրք. և Բուլղ. | 400 » » | 1,300 » » |
| Գումար | 35,250 մ. ռ. | 51,050 մ. ռ. |



## ՊԱՏԵՐԱԶՄ. ԾԱԽՍԵՐԻ ԱՃՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

1914 թ. առաջին ամիսներում
օրական 11,7 մ. ռ.
1915 թ. յուն.—յուլիս » 19, » »
յուլիս—սեպտ. » 22, » »
1916 թ. յունւ.-յուլիս » 35, » »
հոկտ. դեկտ. մօտ » 50, » »
1917 թ. մօտ » 58, » »

Այդ կերպով 1917 թ. օրական ծախսերը 1914 թ. ռազմական ծախսերից 5 անգամ աւել են։

Նոյն՝ եթէ ոչ աւելի, արագութեամբ աճեցին նաև այլ պետութիւնների ծախսերը։

ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ (Պաշտօնական տւեալներ)

| | Սպանուած | վիրաւոր, անպէտք | գերի, անհետ | գումար |
|---|---|---|---|---|
| Անգլիա | 956,700 | 1,500,000 | 200,000 | 2,656,700 |
| Ֆրանսիա | 1,535,000 | 3,000,000 | 705,000 | 5,240,000 |
| Ռուսաս. | 3,000,000 | 4,960,000 | 2,500,000 | 10,460,000 |
| Իտալիա | 610,000 | 946,000 | 53,000 | 2,956,000 |
| Բելգիա | 75,000 | 22,000 | 50,000 | 184,000 |
| Սերբիա | 128,000 | 150,000 | — | 328,000 |
| Գումար | 6,304,700 | 10,512,000 | 4,180,000 | 21,824,700 |



ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵՒ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ (Պաշտօնական տւեալներ)

| | Սպանուած | վիրաւոր, անպէտք | գերի, անհետ | գումար |
|---|---|---|---|---|
| Գերմանիա | 2,000,000 | 4,000,000 | 500,500 | 6,500,500 |
| Աւստ.-Ունգ. | 800,000 | 1,941,000 | 1,172,000 | 3 913,000 |
| Թիւրքիա | 260,000 | 250,000 | 100,000 | 610,000 |
| Բուլղարիա | 130,000 | 150,000 | 50,000 | 330,000 |
| Ռումինիա | 130,000 | 105,500 | 75,000 | 380,000 |
| Գումար | 3,320,800 | 6,446,000 | 1,897,500 | 11,733,500 |

## ԿՌՒՈՂ ՌՈՒՍ ԶԻՆՒՈՐՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ 1914—17 Թ. Թ.

1914 թւին իրական ծառայութեան մէջ կային 1,362,000

Զօրահաւաքի սկզբից կանչւեցին

ա) Պահեստի զինւորներ 3,115,000

բ) Հանրազօրք I դասի 3,300,000

գ) 1914—18 թ. նորակոչ. 3,500,000

դ) Հանրազօրք II դասի 3,000,000

ե) Վերաքննւած սպիտակ տոմսակաւորներ մօտ 250,000

Ընդամենը 14,500,000

Այդ քանակութիւնը մօտաւորապէս բաժանւում էր

1. Գործող բանակում (թիկունքի հիմն. հետ) 8,100,000

2. Ռուսաստանի ներքին շրջաններում.



ա) Պահեստի զօրամաս. 2,200,000

բ) Հանրազօրքի խմբերում 300,000

գ) Բոլոր թիկունքի հիմն. 200,000

3. Սպանւած, մեռած, թունաւորւած անհետ կորած և ծառայութիւնից արձակւած 1,061,000

4. Գերութեան մէջ 2,378,000

5. Վիրաւոր ու հիւանդ զինւորներ հիւանդանոցներում և կարճատև արձակուրդի մէջ 350,000

Գումար 14,500,000

Զօրակոչից ազատ մնացին միայն Պետական պաշտ. աշխատողներ՝ 1,194,000

Զինւորա-ծովային վարչութեան ձեռնարկներում, երկաթուղիներում, նաւերում ծառայողներ և առանձին ցուցակագրւածներ 173,000

Պետական հիմնարկութիւնների

անհրաժեշտ պաշտօնեաներ 64,000

Զինուորա-ծովային վարչութեան հիմնարկութիւնների, երկաթուղիների. առևտրական ու նաւահանգստային նաւերի մէջ ծառայող օպոլչենցիներ 133,000

Ընդամէնը 1,864,000 հ.

«Կոմ. Տարեգ.» թարգմանեց՝
Յ. Պ.

## ԿՈՕՊԵՐԱՑԻԱ ԵՒ ՍՈՑԻԱԼԻԶՄ

«Կօօպերացիա» բառը երկու իմաստ ունի։ Այդպէս է կոչւում հասարակ տեխնիքական աշխատակցութիւնը, մի քանի աշխատողների ոյժերի միութիւնը մի



որևէ գործ կատարելու համար, օրինակ՝ մի քանի աշխատողների համախմբուելը ծանր գերանը բարձրացնելու, կամ մի քանի որսորդների միութիւնը՝ մի խոշոր գազան սպանելու համար։ Այս ձևի տեխնիքական կօօպերացիան միշտ էլ եղել է, կայ և կլինի։ Այսպիսի կօօպերացիայի ձևն ու չափը կախուած է աշխատանքի տեսակից և տեխնիկայի որակից։ Տեխնիքական կօօպերացիան, կամաւոր լինելուց բացի, եղել է և ստիպողական, երբ աշխատողները աշխատակցել են իրար գործատիրոջ հրամանով։

Բայց «կօօպերացիա» բառը ուրիշ նշանակութիւն էլ ունի։ Այդպէս են կոչւում մարդկանց կամաւոր խմբակցութիւնները մի որևէ նպատակով, որին ձգտում են այդ

խմբակցութիւններին մասնակցող-
ները։ Նպատակները զանազան
կարող են լինել։ Օր.՝ վարկի
էժանացումը, էժան գներով զա-
նազան մթերքներ ձեռք բերելը,
այն ապրանքների միացեալ ջան-
քերով վաճառելը, որոնք պատրաստ-
ւում են այդպիսի կոոպերատիւի
իւրաքանչիւր մի անդամի կողմից
առանձին-առանձին և այլն։ Այս-
պիսի կոոպերատիւային կազմա-
կերպութիւնների մէջ համախմբ-
ւում են ոչ միայն աշխատաւոր-
ները, այլ և ուրիշների աշխա-
տանքը շահագործող անգործները։
Մի որևէ ֆաբրիկանտ կամ բան-
կիր կարող է սպառողական կոոպե-
րատիւին անդամագրուել։ Գոյու-
թիւն են ունեցել սպաների, աս-
տիճանաւորների և այլոց սպառ-



ողական ընկերութիւններ։ Վերջա-
պէս կոոպերատիւի երրորդ յատկա-
նիշն է ծառայում այն, որ նրան
մասնակցելը պարտաւորեցուցիչ չէ
և կախուած է մասնակցողների կամ-
քից։

Այժմեան կոոպերատիւը իր ան-
դամների համար մի որևէ շահա-
գործման դէմ պաշտպանելու մի-
ջոց է ծառայում։

Վարկային ընկերութիւնը ձեռն-
տու պայմաններով վարկ է ստեղ-
ծում իր անդամների համար և
այսպիսով նրանց ազատում է վաշ-
խառուի կամ բանկի շահագործու-
մից։ Սպառողական ընկերութիւնը
պաշտպանում է իր անդամներին
վաճառականների խաբէութիւնից և
շահագործումից։ Բնակարանային

կոօպերատիւը կռւում է տանտէրերի ագահութեան դէմ և այլն։

Այսպիսի կոօպերացիան շահագործման անհրաժեշտ զուգահեռն է։ Այս ձևի կոօպերացիան զէնք է այս կամ այն տիպի կապիտալի շահագործման դէմ կռւելու համար։ Նա ծնունդն է կապիտալիստական հասարակակարգի։

Առաջին նախնական կոօպերացիաները (Ֆուրիէ, Օվեն) երևան են, եկել 19-րդ դարի սկզբին, այինքն այն ժամանակ երբ բանւորները և նրանց հետ միասին սպառողների այլ խմբերը սկսեցին շահագործողների լծի ծանրութիւնն զգալ։

Այդ լծի յետագայ հզօրացումը հարկադրել է բանւորներին և մանր բուրժուական որոշ խաւերին սպա-



ռողական ընկերութիւններ հիմնել․ արհեստաւորներին՝ արտադրողական, գիւղացիներին՝ վարկային և այլն։ Կոօպերացիան սկսել է կապիտալիստական հասարակակարգի ժամանակ, նրա օրօք նա զարգացել է, նրա հետ էլ նա մեռնում է։

Յիրաւի, սոցիալիստական իրաւակարգի ժամանակ ինչ կարիք կայ վարկային կոօպերատիւի, երբ պիտի ոչնչանան փողն ու վարկի կարիքը։ Ինչու պիտի լինի բնակարանային կոօպերատիւը այն ժամանակ, երբ բոլոր բնակարանները հասարակական սեփականութիւն պիտի դառնան։ Ինչու պիտի գոյութիւն ունենայ արտադրողական՝ մթերքներ ձեռք բերելու, կամ սպառելու համար կոօպերատիւը,

երբ բոլոր մթերքները պիտի հասարակութեան ձեռքում լինեն։ Ինչու պիտի լինի սպառողական կօօպերատիւը, ինչ օգուտ նա կարող է տալ իր անդամներին։ Ոչ մի։ Որովհետև միևնոյն մթերքները միևնոյն պայմաններով նրանք կարող կլինեն գտնել ամեն մի մթերաբաշխման կէտում։ Իսկ եթէ կօօպերատիւ մտնելուց շահ չունենայ նա, ապա էլ ինչ ոյժ կարող է նրան դրդել այդ անելու համար։ Ոչ մի։ Դրա համար է, որ մենք ասում ենք, թէ բոլոր տեսակի կօօպերացիաները անհետանալու են կապիտալիստական շահագործման հետ զուգընթաց կերպով։ Նա այժմ իր վերջին օրերն է ապրում։

Աւելի ճիշտն ասած, կօօպերա-



ցիան սոցիալիզմի ժամանակ էլ չի կորչի բոլորովին, բայց նրա դերը բոլորովին աննշան կդառնայ։ Կամաւոր կօօպերատիւային համախմբակցութիւններ պիտի լինեն այնպիսի պէտքերի համար, որոնք իրենց բնաւորութեամբ ընդհանուր չեն լինում և ոչ էլ նրանք հասարակութեան մեծամասնութեան կամ նրա մի զգալի մասի կարիքներն են կազմելու։ Այդ կօօպերատիւները պիտի լինեն այնպիսի կարիքների բաւարարման համար, որոնք այսպէս ասած, դեռ չեն լինելու ճանաչուած հասարակութեան կողմից։ Այսպէս օրինակ գեղարւեստի մի որևէ նոր ուղղութեան կողմնակիցները իրենց ազատ ժամանակի մի մասը (և սկզբում էլ, երբ դեռ չի վերացել մասնաւոր

սեփականութիւնը, իրենց սեփականութեան մի մասը) յատկացնելու են իրենց գաղափարների տարածման, գեղարուեստի այս կամ այն արտադրութիւնը հրատարակելու համար և այլն։ Կօօպերացիայի մէջ կմտնի գլխաւոր ամամբ գեղարուեստը, գրականութիւնը, գիտութեան զանազան ճիւղերը, սպորտը և այլն։

Դրա համար էլ չի կարելի համաձայնել Կ. Կաուցկու հետ, որը գրում է. «Մեր առաջ ուրուագծուող հասարակութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ սպառողական և արտադրողական անընդգրկելի մի կօօպերատիւ, որը իր կազմի մէջ մտնող անդամների համար իրեն է պարաստում»։

Սոցիալիստական հասարակակար-



գում արտադրութիւնն ու մթերքների բաշխումը կազմակերպւելու են ոչ թէ կօօպերատիւային սկզբունքներով, այլ հասարական աշխատանքի հիմունքներով։ Հասարակութեան անդամներից չի կախւած այդ կազմակերպութեան մէջ մտնելն ու չմտնելը։ Կօօպերացիայի բնորոշ գիծը կազմող՝ կամաւոր մուտքը վերանում է։ Հասարակութեան բոլոր անդամներն էլ պարտաւոր պիտի լինին աշխատելու, որովհետև «չաշխատողը չի ուտելու»։ Նրանք բոլորն էլ հասարակութիւնից պիտի ստանան բոլոր անհրաժեշտ մթերքները (ծանօթութիւն.—Չի կարելի ենթադրել, որ արտադրութիւնն ու մթերքների բաշխումը պետութեան ձեռքը կանցնեն, որովհետև պետութիւնը, որը մի զէնք է որևէ օգ-

նութեամբ մի որևէ դասակ
միացած դասակարգերին շահագ
ծելու համար իր իրաւունքն է
պահովում, պիտի վերանայ
կվերանան դասակարգերը)։ Ն
բանը պիտի լինի, ինչ մենք
նում ենք աշխատաւորական,
նակ գեղջկական մի որևէ մեծ
տանիքի մէջ։ Այդպիսի մի ըն
նիք ոչ մէկի կողմից չի կարող կօ
րատիւ կոչուել։ Նոյնկերպ էլ
գայ սոցիալիստական հասար
թիւնը չի կարող կօօպեր
կոչուել։

Կապիտալիստական իրաւակ
ջերմեռանդ պաշտպանները այժ
կօօպերացիան աշխատում են
կել իբրև նախապայմանը սո
լիզմի, նպատակ ունենալով
րատև դարձնել իրենց տէրերի
խանութիւնը։



Բայց այժմ բոլորի համար էլ պարզ է, որ կօօպերացիան իր արդի կազմութեամբ անկարող է ապահովել իր անդամներին կապիտալիզմի ծանր լծից։ Փրկութեան միակ միջոցը սոցիալիզմն է, դէպի որը մենք պիտի ձգտենք բոլոր ուժերով։

Ն. Մէշչեր

# ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ

## Ի՞ՆՉ Է ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Գիտութիւնը, — դա նստակեաց ժողովուրդն է, որը ապրում է մի միակ բարձրագոյն իշխանութեան ներքոյ։

Ու ընմ՝ այնտեղ, ուր չկայ ժո-

ղովուրդ, չկայ և պետութիւն, կա
ուր կայ ժողովուրդ, որը տակայ
թափառական է, այսինքն՝ չուն
մի որոշ հաստատուն բնակավայ
այնտեղ չէ կարող լինել և պետու
թիւն.— օրինակ թափառաշրջիկ ժո
ղովուրդը պետութիւն չէ կազմու
Վերջապէս նստակեաց ժողովուրդ
միայն այն դէպքում է պետութի
կոչւում, երբ նա ապրում է մ
բարձրագոյն իշխանութեան ենթ
կայ, այսինքն, երբ այդ նստակեա
ժողովուրդն ունի մի որևէ բարձր
գոյն իշխանութիւն, որին հպատա
ւում են բոլորը։

Ուրիշ խօսքով, այն բոլոր դէպ
քերում, երբ կան հետևեալ եր
պայմանները, այն է՝ 1) ժողովուր
2) նրա նստակեացութիւնը և
բարձրագոյն իշխանութիւն՝ այ



տեղ կայ և պետութիւն. իսկ ուր չը կայ այս երեք պայմաններից մէկն ու մէկը՝ այնտեղ չը կայ և պետութիւն։

Պետական իշխանութիւնը բաղկացած է երեք տեսակի իշխանութիւններից—օրէնսդրական, կատարողական և դատաստանական։

Օրէնքներ հրատարակելու իրաւունքն անւանւում է օրէնսդրական իշխանութիւն։

Այդ օրէնքներն իրագործող իրաւունքն անւանւում է կատարողական կամ կառավարչական իշխանութիւն։

Դատող կամ արդարադատութիւն կատարող իրաւունքն անւանւում է դատաստանական իշխանութիւն։

Երբ պետութեան մէջ բարձրագոյն իշանութիւնը պատկանում է մէկ անձի միայն, այսինքն թագա-

*ւորի, իշխանի, կայսեր—այն ժա*
*մանակ մենք անուանում ենք այ*
*իշխանութիւնը բացարձակ միապե*
*տութիւն կամ ինքնակալութիւն։*

*Պետական բարձրագոյն իշխա*
*նութիւն կարող է պատկանել ող*
*ժողովրդին կամ նրա ընտրած ներ*
*կայացուցիչներին։ Պետական այդ*
*պիսի կազմը անուանւում է հասարա*
*կապետութիւն։*

*Վերջապէս կայ և մի այլ տեսա*
*պետական կազմ, երբ պետակա*
*է մասամբ ժողովրդին և մասամ*
*թագաւորին,—այդպիսի պետակա*
*կազմը կոչւում է սահմանափակ կա*
*սահմանադրական պետութիւնը։*

*Այդպիսի միապետութեան մէ*
*թագաւորի ինքնակալական իշխա*
*նութիւնը սահմանափակւած է ժո*
*ղովրդին վերապահած իրաւունք*



Ռուբէն Քաջազնունի

*Հայաստանի Հանրապետութեան*
*անդրանիկ վարչապետ*

ներով և ազատութիւններով, որոն
դուրս են թագաւորի իշխանու-
թիւնից:

Այդ իրաւունքները, արտօնու-
թիւնները և ազատութիւնները մ
առ մի յիշւած են լինում երկր
հիմնական օրէնքի մէջ:

Այդ օրէնքը որոշում է պետակա
կազմակերպութեան հիմունքները
դրա համար էլ նա կոչւում է հի
նական օրէնք:

Հիմնական օրէնքը ուրիշ անու
նով ասւում է սահմանադրութի
կամ կօնստիտուցիա, այսինքն հի
մունքներ, որով որոշւում են ո
պէս ժողովրդի իրաւունքներն
պարտականութիւնները, նոյնպէս
թագաւորի իրաւունքներն ու պա
տականութիւնները: Նա է, որ
րոշում է, թէ վերև յիշւած երկ



իշխանութիւններից որո՛նք են պատ-
կանում ժողովրդին և որո՛նք թա-
գաւորին:

Սովորաբար ժողովրդի ձեռքին գտնւում է օրէնսդրական և դատաստանական իշխանութիւնը, իսկ թագաւորին մնում է կատարողական (ծրագիր)· կամ կառավարչական իշխանութեան բոլոր երեք տեսակները պատկանում են ժողովրդին, գտնւում են նրա ներկայացուցիչների ձեռքում: Դրա համար էլ անգլիական թագաւորի մասին ասում են, որ նա միայն «թագաւորում է, սակայն չէ կառավարում պետութիւնը»:

Ռուսաստանում բոլոր երեք իշխանութիւնները՝ օրէնսդրական, դատաստանական և գործադիր, պատկանում էին կայսեր, որի իշխա-

նութիւնը ոչինչ և ոչ ոք չէ ս
մանափակում։ Հետևապէս Ռուս
տանում բարձրագոյն ողջ իշ
նութիւնը թագաւորի ձեռքում
ուրիշ խօսքով՝ Ռուսաստանը (
ցարձակ միապետութիւն էր։

Նօվօտորժսկ

—

## ԻՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻ

Իւրաքանչիւր պետութեան
կայ իշխանութիւն, որի անու
օրէնքներ են հրատարակւում և
անունով երկիրը կառավարւու
Այդպիսի իշխանութիւնը, մ
իրեն ենթարկւած և իրենից ի
ւունք ստացող իշխանութիւնն
տարբերելու համար կոչւու
բարձրագոյն իշխանութիւն.
բոլոր իշխանութիւնները բար



գոյն իշխանութեան օրգաններն են.
րանք երկրորդական, ստորադրեալ
են. դրանք բարձրագոյն իշխանու-
թեան հրամանները կատարող են։

Բոլոր, պետութեան սահմաններ-
րում ապրող, և ոչ օտարահպատակ
անձինք, պարտաւոր են հնազանդ-
ել բարձրագոյն իշխանութեան և
կատարել նրա բոլոր հրամանները,
որոնք օրինական ճանապարհով,
իբրև օրէնք հրատարակւած են։
Բարձրագոյն իշխանութեան և պե-
տութեան ազգաբնակութեան միջև
եղած կապը այդ է։ Այդ կապը մի
քանի պետութիւններում կոչւում
է հպատակութիւն, միւսներում՝
քաղաքացիութիւն։ Իսկապէս քա-
ղաքացիութիւնը նոյն հպատակու-
թիւնն է, բայց հպատակութիւն
ոչ թէ անհատին, այլ պետութեանը։

Այն պետություններում,
բարձրագույն իշխանությունը պ…
կանում է ժողովրդին, գտնու…
ժողովրդի ձեռքին, այնտեղ գո…
թյուն ունի ժողովրդապե…
թյուն,—ժողովրդի իշխանությ…
Հետևապես ժողովրդապետութ…
ասելով պետք հասկանալ՝ բարձ…
գույն իշխանությունը ժողով…
պատկանելը։ Ժողովուրդը ինք…
օրենք հրատարակում և երկ…
կառավարում։ Ժողովրդի անունո…
օրենք հրատարակում և երկ…
կառավարում։ Հետևապես բ…
գոյություն ունեցող իշխանությ…
ները, որոնք օրենք են հրա…
րակում և կառավարում են եր…
րը—ժողովրդի կամքն են կա…



…ւմ, նրա լիազորությամբ են գոր-
…ւմ։

Ահա թե ինչ է ժողովրդապետու-
…ունը։

Վ. Գոլուբև

---

## ՕՐԻԱՑ ՀԱՐՑԵՐ

### Ի՞ՆՉ Է ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Սոցիալիզմը կոչւում է այն գի-
…ական վարդապետությունը, որ
…ում է արմատապես փոխել գո-
…թյուն ունեցող հասարակական-
…տեսական կարգերը, սահմանե-
…լ մասնավոր սեփականության
…փարէն համայնական սեփակա-

նութիւն և ճնշման ու շահագործ-
ման փոխարէն լիակատար ազա-
տութիւն ու հաւասարութիւն։

Մասնաւոր սեփականութեան սկզբ-
բունքը հնարաւորութիւն է տա
համեմատաբար սակաւաթիւ մարդ-
կանց իրանց ձեռքը կենտրոնացնե-
լու արդիւնագործութեան միջոցնե-
րը—(հողը, գործարանները, մեքե-
նաները, երկաթուղիները, նաւթեր
և այլն)—կամ ուրիշ խօսքով ասած
կապիտալը։

Հէնց այդ պատճառով էլ այ
մարդիկ կոչւում են կապիտալիստ-
ներ։

Դրանք, մասնաւոր սեփականու-
թիւն դարձնելով կապիտալը, հա
մախմբում են նրա շուրջը աշխա-
տաւորներին և քամում, շահագոր-
ծում վերջիններիս քրտինքը։ Այդ



գլխով բացւում է անհաւասարու-
թեան վիհը և իրար հանդէպ կանգ-
նեցնում երկու հակառակ դասա-
կարգերին՝ մի կողմում սակաւաթիւ
ունեւորներին — կապիտալիստներին
իսկ միւս կողմում՝ կեղեքւողներին-
աշխատաւորներին։

Ժամանակակից գիտութիւնն ու
տեխնիկան, շոգին, էլէքտրականու-
թիւն և այլ ոյժեր հետզհետէ զար-
գացնում են արդիւնագործութիւնը,
բայց իսկական աշխատաւորները
միայն փշրանքներ են վայելում
արդիւնքներից։ Նրանք ստանում
են միայն այնքան, որ հազիւ բա-
ւականացնում է չարքաշ ապրուստի
համար։ Այն ինչ կապիտալի տէրե-
րը առանց աշխատելու առատօրէն
վայելում են բոլոր բարիքներից և
միևնոյն ժամանակ աւելի մեծաց

նում են իրանց հարստութիւն
կապիտալը։

Ահա այդ անհաւասարութ
անդնդախոր վիհը հաւասարութե
ցնելու համար է, որ սօցիալի
քարոզում է վերացնել չարիքի
կական արմատը՝ մասնաւոր սե
կանութիւնը, որպէսզի արդի
գործութեան-բոլոր միջոցները պ
կանեն ամբողջ հասարակութե
այսինքն դառնան համայնա
սեփականութիւն և բոլոր մար
հաւասար չափով իրաւունք ու
նան և աշխատելու և աշխատա
բարիքներն վայելելու։

Սօցիալիզմի վարդապետութի
լայն մտքով վերցրած, իր սկի
առնում է շատ հին ժամանա
րից։ Այդ մտքով Պլատօնը, Բ
նը, Թօմաս Մուրուսը, Հարինգ



Մօրելլին, Մաբլին և ուրիշ հե-
ակներ նոյնպէս կարող են սօ-
ալիստներ համարուել։

Սակայն ժամանակակից սօցիա-
զմի իմաստը ոչ այդ հնադարեան
կապ ու անսիստեմ մտքերն են,
էլ Սեն Սիմօնի, Ֆուրիէի կամ
ուէնի ուտօպիական ուսմունքը,
լ այն հոյակապ գիտական վար-
պետութիւնը, որի հիմքը դրել
Կարլ Մարկս և Ֆրիդրիխ Էն-
լս։

Ուտօպիական սօցիալիզմի հեղի-
ակները—(Սէն Սիմօն և միւսնե-
ը)—հաւատացած էին, թէ հնա-
ւոր է հասարակական կարգերը
րեփոխել, հիմնելով օրինակելի
ութիւններ ու գաղութներ սօ-
իալիստական հիմունքներով։

Նրանցից յետոյ Լուի Բլան և

Լասսալ իրանց յոյսը դրել էին պե
տութեան վրայ, կարծելով,
վերջինս կարող է պետական մի
ջոցներով արդիւնագործական միա
թիւններ կազմակերպել և դրանո
աստիճանաբար վերացնել մասն
ւոր ձեռնարկութիւնները։

Իսկ Մարկս և Էնգելս գիտակ
վերլուծման ու քննութեան են
թարկելով հասարակական կեանք
գալիս են այն եզրակացութեան, ո
վերոյիշեալ ուսմունքները ուտո
պիական են՝ անհիմն և անիրագոր
ծելի։

Նրանց կարծիքով հէնց ժամ
նակակից կապիտալիստական կար
գերը իրանց մէջ պարունակում են
այնպիսի տարրեր, որոնք հետզհե
տէ զարգանալով տանում են դէպ
սօցիալիզմի իրականացումը։



Ահա թէ ինչպէս. արդիւնագոր-
ութիւնը հետզհետէ կենտրոնանում
սակաւաթիւ կապիտալիստների
եռքում, միևնոյն ժամանակ աւե-
ացնելով սեփականագուրկ աշխա-
տաւորների—պրոլետարիատի քա-
նակը. այդպիսով որոշ ժամանա-
կից յետոյ հարկաւոր կլինի միայն
մի քայլ, որպէսզի փոխել դրան կա-
պիտալիստական կարգերը շահա-
գործման ու անհաւասարութեան
հետ միասին և նրանց տեղ թագա-
ւորեն սօցիալիստական կարգերը։
Հէնց այդ պատճառով աշխատաւոր
դասակարգը իր կազմակերպուած
շարքերով պէտք է եռանդուն կեր-
պով աշխատի շտապեցնել սօցիա-
լիստական այդ յեղափոխութիւնը։

Գիտական սօցիալիզմի հիմունք-
ները լուսաբանուած են գլխաւորա-

պէս Մարկսի վարդապետութեան մէջ, որ կարելի է բաժանել երեք մասի. 1) զուտ տնտեսագիտական ուսմունք, որ արծարծուած է «Կապիտալ» վերնագրով աշխատութեան մէջ. 2) պատմա-փիլիսոփայական տեսութիւն, որ պարզուած է թէ «Կապիտալի» մէջ և թէ միւս գրուածքներում և 3) տնտեսական մատերիալիզմի թէօրիան։

Մարկսի վարդապետութիւնը աւելի արծարծել ու ժողովրդականացրել են բացի նրա ընկերակից Էնգելսից նաև Բեբելը, Լիբկնեխտը, Կաուցկին, Բերնշտայնը, Մերինգը, Լաֆարգը, Զիբերը և ուրիշները։

Սակայն 90-ական թւականների վերջին Մարկսի հետևորդների շարքերում առաջ եկաւ պառակտում։ Նշանաւոր մարկսիստ Բերնշտայն



հրատարակեց իր յայտնի գրուածքը, «Die Voraussetzungen des Sozialismus und die Aufgaben der Sozialdemokratie», որով հերքում է սոցիալական յանկարծակի յեղափոխութեան հնարաւորութիւնը, ցոյց է տալիս, որ սխալ է ասել, թէ արդիւնագործութիւնը հետզհետէ կենդրոնանում է խոշոր սեփականատէրերի ձեռքը, և վերջում պնդում է, թէ կամաց-կամաց որոշ ջանքերով ու բարեփոխութիւններով հնարաւոր է կապիտալիստական կարգերը դարձնել սոցիալիստական։

Բերնշտայնի առաջացրած այդ հոսանքը, որ ունի բաւական խոշոր թւով կողմնակիցներ, ներկայումս յայտնի է ռեվիզիօնիզմ կամ քննադատական սոցիալիզմ անունով։ Բացի դրանից սոցիալիզմ խօսքը գործ է



Համօ Օհանջանեան

*Հայաստանի Հանրապետութեան արդի վարչապետ*



ածուած իմաստով, որ ոչ մի կապ չունի գիտական սոցիալիզմի հետ, այն է — 1. Պետական սոցիալիզմ, որի նպատակն է իշխանութեան միջամտութեամբ ենթարկել արդիւնագործութիւնը և բանուորների վիճակը պետական վերահսկողութեան, աշխատել այդ ճանապարհով հաշտեցնել դասակարգային հակադրութիւնները և այդպիսով կաշկանդել իսկական սոցիալիզմի հոսանքը։ 2) Համայնական սոցիալիզմ կոչւում է քաղաքային ինքնավարութիւնների ձգտումը՝ քաղաքի սեփականութիւն դարձնելու ընդհանուր ազգաբնակութեանը անհրաժեշտ ձեռնարկութիւնները — (ձիաքարշ, էլեքտրաքարշ, լուսաւորութիւն, ջրաբաշխութիւն և այլն) — և որոշ չափով բարւոքելու աղքատ

դասակարգի վիճակը։ 3) Կատեդեր սոցիալիզմի կողմնակիցները կարծում են, թէ բանւորական հարցը կարելի է լուծել, գոյութիւն ունեցող տնտեսական պայմաններում գործարանային օրէնսդրութեամբ և միութիւնների օգնութեամբ բարւոքելով բանւորների վիճակը 4) Քրիստոնէական սոցիալիզմի հետեւորդները, գլխաւորապէս բողոքական և կաթոլիկ հոգևորականները, իբրև հակադրութիւն իսկական սոցիալիստական վարդապետութեան քարոզում են, որ անհրաժեշտ է ամեն ինչ մի կողմ թողնել և աւետարանական ոգով կրթել մարդկանց, որովհետև միայն այդ ճանապարհով կիրականանայ արդարութիւնը, հաւասարութիւնը և ընդհանուր բարօրութիւնը։ Դրանց



գործունէութիւնը, իրականապէս արտայայտւում է նրանով, որ հոգևորականների հսկողութեամբ և բարեգործների օժանդակութեամբ հիմնում են սպառող, արդիւնաբերող կամ այլ բանւորական ընկերութիւններ ու բարեգործական հիմնարկութիւններ։

Այսպէս ուրեմն սոցիալիզմ ասելով երբէք չպէտք է շփոթել զանազան կեղծիքների կամ կիսատ-պռատ հասկացողութիւնների հետ։

Իսկական սոցիալիզմը այն միակ վարդապետութիւնն է, որ ցոյց է տալիս կատարեալ հաւասարութեան ու ազատութեան ուղին և նրանց իրագործման միջոցները։

Այն բոլոր մարդիկ, որ կողմնակից են այդ վարդապետութեանը, կոչւում են սոցիալիստներ։

Իսկ քաղաքական այն կուսակցութիւնները, որոնք իրանց ծրագրում նպատակ են դրել սօցիալիզմի իրականացումը և գործում են այդ ուղղութեամբ, կոչւում են սօցիալիստական կուսակցութիւններ։

Ն. Թ.

# ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Սօցիալիստական շարժումը, թէ նրան կեանքի կոչող պատճառների և թէ իր առաջացած նպատակների բերումով, միացած է ներքին անհրաժեշտ կապով Ինտերնացիոնալի, այսինքն համամարդկային համերաշխութեան ու մարդկութեան միջազգայնօրէն կազմակերպման գաղափարի հետ։ Կապիտալիզմի



զարգացման հետ՝ արդիւնաբերութիւնն ու առևտուրը սկսեցին կորցնել իրենց սեղմւածութիւնն ու ազգային ձևերը։

Այն սերտ փոխ-յարաբերութիւնները, որոնց մէջ մտնում են առանձին երկիրներ՝ համաշխարհային տնտեսութեան պրոցեսում, նրանց իրար կապում են հազարաւոր աներևոյթ թելերով։ Ամենուրեք աշխատանքը համանման վերաբերմունք է յայտնաբերում դէպի իրեն շահագործող կապիտալը. զանազան երկիրների պրոլետարիատի միջև ստեղծւում է շահերի նոյնութիւն, որ հաւասարապէս հակադիր է բոլոր երկիրների կապիտալիստների շահերին։ Պրոլետարիատի շահերի այդ համանմանութիւնը անհրաժեշտօրէն բերում է

իր հետ՝ միջազգային պրոլետարական համերաշխութեան զարթնումն ու ձգտում է միացնելու ճիգերն ամենքի համար ընդհանուր այն պայքարում, որ աշխատանքն ամեն տեղ մղում է իր ազատագրման համար։

Լոնդոնում, 1864 թ. սեպտ. 28-ին Սենտ-Մարտինս-Հօլլի միջազգային բանւորական միտինգում ընտրեց մի կոմիտէ՝ մշակելու համար Բանւորների Միջազգային. Ընկերակցութեան կանոնագիրը, որ քիչ յետոյ ընդունեց Կարլ Մարքսի գրած Սահմանադիր Ուղերձն և Կանոնադրութիւնը, որոնք հռչակում էին այն սկզբունքները, որոնք պէտք է դրւէին պրոլետարական պայքարի հիմքում։

Բանւորների ազատագրումը պէտք



է լինի հէնց իրենց՝ բանւորների գործը։ Պայքարելով իրենց գոյութեան համար՝ բանւորները պէտք է ձգտեն ոչնչացնելու դասակարգային որևէ անհաւասարութիւն։ Բանւորի-արտադրութեան միջոցների այդ կրողի-տնտեսապէս ենթարկւած լինելը հիմնական պատճառն է հանդիսանում սոցիալական չքաւորութեան և պրոլետարիատի քաղաքական կախման. ուստի բանւոր դասակարգի տնտեսական ազատագրումը տեղական կամ ազգային խնդիր չէ, այլ սոցիալական և առաջաւոր երկիրների մեծամասնութեան փոխադարձ աջակցութեամբ միայն լուծելի մի խնդիր։ Այդ աջակցութեան նպատակով՝ հիմնւում է Բանւորների Միջազգային Ընկերակցութիւնը, գլխաւորութեամբ

Լոնդոնի ընդհանուր Խորհրդի, որ բաղկանում է Ընկերակցութեան միացած բոլոր երկիրների բանւորների ներկայացուցիչներից։ Իւրաքանչիւր երկրում բանւորական ընկերութիւններ ու միութիւններ, որոնք Ինտերնացիոնալի սեկցիաներն են կազմում, պէտք է միանան մի ազգային կազմակերպութեան մէջ՝ իրենց իրաւունք վերապահելով անմիջականօրէն յարաբերութիւն ունենալու Ընդհանուր Խորհրդի հետ։

Այդ էր Ինտերնացիոնալի կանոնագրութեան բովանդակութիւնը։

Միջազգային համերաշխութեան գաղափարը սկսեց հետզհետէ աւելի ու աւելի հետեւորդներ գտնել և ամրապնդել բանւորական լայն զանգւածների գիտակցութեան մէջ։ I



տերնացիոնալի ազդեցութիւնը, նըրա գաղափարը ժողովրդական դարձաւ եւրոպական պրոլետարիատի մէջ և սոսկալի դարձաւ միջազգային կապիտալի համար։ Բոլոր առաջաւոր երկիրներում իրար յետեւից հիմնուեցին նրա սեկցիաները։

II

Բազելի կոնգրեսից մինչև Ֆրանսօ-պրուսական պատերազմի սկիզբն նացած մի տարին Ինտերնացիոնալի հզօրութեան ու ազդեցութեան ամենամեծ ծաւալման շրջանն էր։

Բայց Ինտերնացիոնալի այդ բարձրագոյն բարգաւաճման րոպէին՝ նրանում սկսեցին երեւան գալ արդէն քայքայիչ տարրեր, որոնք պայմանաւորեցին յետագայում նրա անկումն ու կործանումը։ Բակու-

նինի անիշխանական քարոզը, որ դեռ 1868 թ. հիմնել էր իր «Սոցիալական դեմոկրատիայի միջազգային միութիւնը», մեծ աջողութիւն էր գտել տնտեսապէս ամենայետամնաց երկիրների պրոլետարիատի ստորին խաւերում, ինչպէս և ինտելլիգենցիայի միջև։ Բակունին, սոցիալ - քաղաքական ֆանտաստիկան արտայայտում էր նոր զարթնող պրոլետարական զանգւածի տարերային բռնկումը. Մարքսի սոցիալ-քաղաքական ռէալիզմը համապատասխանում էր՝ պայքարի փորձով ամրապնդւած և ուռճացած պրոլետարիատի գիտակցական ձգտումին՝ դէպի իր ազատագրումը, ծրագրւած կազմակերպումով և իրականութեան տւած բոլոր քաղաքական հնարաւորու-



Ալ. Խատիսեան

Հայաստանի Հանրապետութեան նախկին վարչապետ

թիւնների օգտագործումով։ Բակունինը և իր հետևորդները քաղաքական կռիւը համարում էին միայն մի շարք կոմպրոմիսներ ու գործառնութիւններ բուրժուական կուսակցութիւնների հետ, ուստի և քաղաքական ամեն մի շարժում ըստ էութեան համարում էին բուրժուական և մերժում էին քաղաքական բոլոր այն արարքները, որոնց անմիջական և ուղղակի նպատակը չէր աշխատանքի վերջնական յաղթանակը կապիտալի վրայ։ Նրանք առաջադրեցին քանդել պետութիւնը և պատրաստում էին սոցիալական յեղափոխութեան՝ տեղական անընդհատ ապստամբութիւններով, որոնք նրանց կարծիքով, վերջ ի վերջոյ պէտք է առաջնորդէին դէպի ընդհանուր ապստամբութիւնը։



Այդ պառակտիչ տարակարծութիւնները կատարեալ կազմալուծում մտցրին Ինտերնացիոնալի շարքերի մէջ, իսկ Կոմմունը արիւնով ճնշւելուց յետոյ կառավարութիւնների կողմից նրան յայտարարւած պատերազմը դժւարացնում էր նրա գործունէութիւնը։ 1872 թ. Ինտերնացիոնալի Հաագի կոնգրեսում, պրոլետարիատի քաղաքական գործունէութեան հարցի մասին ընդունեց մի բանաձև, որ ասում էր, թէ կազմւում են բանւորական անկախ քաղաքական կուսակցութիւններ՝ իբր անհրաժեշտ միջոց աշխատանքի ազատագրման համար մղւող պայքարում։ Ջնայած բակունիստների պահանջներին, Ընդհանուր Խորհրդի իրաւունքները ոչ միայն չսահմանափակւեցին, այլ

ընդհակառակը, ընդլայնեցին։ Բայց կոնգրեսի միջոցին արդէն պարզուել էր, որ պրոլետարիատի լայն խաւերում բակունիստների ազդեցութիւնն այնքան էր աճել, որ կոնգրեսի կազմն ոչ բոլորովին համապատասխանում է պայքարող ոյժերի իրական համեմատականութեան։ Ուզելով Ընդհանուր Խորհուրդը փրկել անիշխանականների կողմից գրաւելուց՝ կոնգրեսն որոշեց նրա կենտրոնը փոխադրել Նիւ-Եօրկ․ Միացեալ-Նահանգներում Ինտերնացիոնալի առաջւայ քաղաքականութեան կողմնակիցների ազդեցութիւնը շարունակում էր մնալ մեծ բարձրութեան վրայ։

Ընդհանուր խորհրդի Նիւ-Եօրք տեղափոխումը ցոյց էր տալիս, որ



Ինտերնացիոնալն արդէն մահամերձ է։

Հաագի կոնգրեսում ջախջախուած անիշխանականները յաղթուած չէին համարում իրենց։ Նրանք որոշեցին միացնել Ընդհանուր Խորհրդից դժգոհ բոլոր տարրերը, և այդպէս էլ արին. հիմք դնելով այսպէս կոչուած Զոնդերբունդին, որ իրեն համարում էր Ինտերնացիոնալի գործունէութեան իսկական շարունակողը։ Ընդհանուր խորհուրդն ովկիանոսով բաժանուած եւրոպական բանւորական շարժումից, խարխափիկ գոյութիւն ունեցաւ մինչև 1876 թւականը, երբ Ֆիլադելֆիայի կոնֆերանսը միաձայն որոշեց ցրել նրան՝ գտնելով, որ Ինտերնացիոնալի վերականգնումի մասին կարելի է խօսել միայն այն ժամա-

նակ, երբ առաջաւոր երկրներում կըստեղծւեն ազգային բանւորական ուժեղ կազմակերպութիւններ, որոնք կըկարողանան քանդել այն պատնէշները, որ նրանց բաժանում են այլ երկրների բանւորներից։

70-ական և 80-ական թւականները այդպիսի ազգային կազմակերպութիւնների աճման ու ծաւալման շրջանն էին։

III.

Ինտերնացիոնալը վերստեղծելու փորձերը սկսեցին արւել նրա կործանումից անմիջապէս յետոյ. 1877 և 1882 թւականներին միջազգային կոնգրեսներ հրաւիրեցին Գենտում և Խուրէյում, բայց դըրանք ցոյց տւին, որ Ինտերնացիոնալի վերածնութեան մասին



դեռ ևս կանուխ է խօսել։

Միայն 80-ական թւականների վերջին, երբ Արևմտեան Եւրոպայի երկիրների մեծ մասում առաջ եկան և ամրացան բանւորական կուսակցութիւնները՝ Ինտերնացիոնալի վերածնութեան հարցն օրակարգի խնդիր դարձաւ։

1889 թւականին Փարիզում գումարւեց միջազգային սոցիալիստական բանւորական կոնգրես՝ 20 պետութիւնների ներկայացուցիչներից։ Այդ կոնգրեսը, որից սկիզբ է առնում երկրորդ Ինտերնացիոնալը, վճռեց ապագայում էլ այդպիսի միջազգային համագումարներ հրաւիրել և հաստատեց մայիսի 1-ի տօնը, իբր միջազգային ցոյց 8-ժամեայ բանւորական օրւայ օգտին։

Այդ ժամանակից միջազգային

սոցիալիստական կոնգրեսները ըսկսեցին կանոնաւորապէս գումարուել իւրաքանչիւր 2—4 տարին մի անգամ։ Նրանք հանդիսանալով միջազգային բանւորական շարժման բարձրագոյն ղեկավարները՝ իրենց բանաձևերով որոշում էին, թէ սոցիալիստական ծրագրի բոլոր վիճելի հարցերը, և թէ ազգային կուսակցութիւնների առաջ քաղաքական կեանքի յարուցած տակտիկայի խնդիրները։ Բանւորական ժամանակի օրէնսդրական ձևակերպումը, նւազագոյն աշխատավարձի հարցը, կօօպերատիւ շարժման և թաղապետական (մունիցիպալ) սոցիալիզմի հանդէպ վերաբերմունքը՝ ընդհանուր գործադուլի նշանակութիւնը՝ իբր կռւի միջոց, ժողովրդական անմիջական օրէնսդրու-



թեան հարցը սոցիալիստների մասնակցութեան թոյլատրելիութիւնը բուրժուական դահլիճներում և բուրժուա կուսակցութիւնների հետ բլոկ կազմելու հարցերը, կանանց խընդիրը, սոցիալիստների վերաբերմունքը դէպի միջազգային քաղաքականութիւնը՝ ընդհանրապէս և դէպի գաղութային քաղաքականութիւնը՝ մասնաւորապէս, պատերազմի և գաղտնի դիւանագիտութեան հարցերը, մշտական բանակի փոխարինումը ժողովրդական ընդհանուր զինումով—այդ ամէնը մանրամասն քննութեան ենթարկւեց միջազգային կոնգրեսներում և նրանց բանաձևերում լուսաբանութիւն ու լուծում գտան։ Միաժամանակ, միջազգային կոնգրեսները պայքարի ասպարէզ էին

դառնում գաղափարական զանազան հոսանքների միջև, որոնք գոյութիւն ունէին միջազգային սոցիալիստական շարժման շարքերում։

20-րդ դարու սկիզբը, որ նշանակելի դարձաւ մի շարք միջազգային բարդութիւններով ու պատերազմներով, ստիպեց սոցիալիստական կոնգրեսներին՝ յատուկ ուշադրութիւն դարձնել միջազգային քաղաքականութեան հարցերի վրայ. II Ինտերնացիոնալի սկիզբից եւեթ՝ չեղաւ ոչ մի կոնգրես, որ այս կամ այն ձևով կը շօշափէր այդ հարցերը. բայց նոր դարու սկզբից՝ նրանք առաջին պլանի վրայ են քաշւում և ամենատաք վիճաբանութիւններ առաջացնում կոնգրեսներում։

1907 թ. Շտուտգարդի կոնգրեսը



ազգալով համաշխարհային պա-
զմի ժամանալը՝ որոշեց, որ
նտարիատի պարտքն է ամեն
անել նրան կանխելու համար.
եթէ տեղի ունենայ, ոչ միայն
մտել նրան ամենաշուտ կերպով
րեցնելու, այլ և « մեն կերպ
գործել պատերազմի առաջաց-
տնտեսական ու քաղաքական
ժամը՝ ժողովրդի ամենալայն
րում ագիտացիա մղելու և
իալիստական տիրապետու-
ն անկումը փութացնելու հա-
։ 1912 թ. Բազելում գումար-
արտակարգ կոնգրեսը, Բալկա-
ն թերակղզում առաջացած բար-
թիւնների առթիւ, մի անգամ էլ
դծեց բոլոր երկիրների պրոլետա-
ի պարտքը՝ ամեն կերպ պայ-
ելու պատերազմի դէմ։

Բազելի կոնգրեսը II Ինտերնացիոնալի վերջին կոնգրեսն էր։ Յաջորդ հերթական կոնգրեսը պէտք է գումարուէր 1914 օգոստոսի վերջը Վիեննայում։ Սակայն սկսուած Եւրոպական պատերազմն ոչ միայն խանգարեց դրան, այլ ջախջախեց II Ինտերնացիոնալը, երեւան հանելով, որ երկիրների մեծ մասում պրոլետարիատի խոշոր մի մասը շարունակում է մնալ ազգայնական գաղափարախօսութեան ազդեցութեան տակ։ Սոցիալիստական շարժումը, որ մինչեւ այն ժամանակ, չը նայած նրան մասնակցողների միջեւ բոլոր տարակարծութիւններին, մի եւ հզօր էր համարւում, բաժանուած էր երկու անհաշտ մասերի—մեծամասնութիւնը, որ հրաժարուեց շարժման նախկին նշանա-



բաններից եւ-որ իր երկիրների տիրող դասակարգերի հետ դաշինք էր կնքել, եւ փոքրամասնութիւնը, որ հաւատարիմ նախկին իդէալներին եւ Ցիմմերւալդում ու Քինտալում իր կոնգրեսներով հիմք դրեց պրոլետարիատի միջազգային նոր միացման։ Երկարատեւ պատերազմի սոսկումներն եւ տիրող դասակարգերի եսասիրական քաղաքականութիւնը ամրապնդեցին այդ փոքրամասնութեան դիրքը, ամենուրեք աճեցրին նրա ազդեցութիւնն եւ հեշտացրին պրոլետարիատի ապագայում միջազգային նոր միութեան վերածումը՝ սոցիալիստական շարժման հերթական խնդիրը դարձնելով III Ինտերնացիոնալի ստեղծումը։

# ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

## ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԻ

—

*Վահան Խորէնին ծնուել է 1884 թ. Զանգեզուր գաւառի Բռնակոթ գիւղում։ Սկզբնական կրթութիւնը ստացել է ծխական դպրոցում, միջնակարգը՝ Էջմիածնի Ճեմարանում։ Միջնակարգ կրթութիւնը վերջացնելուց յետոյ, անցնում է Գերմանիա և մտնում Լեապցիկի համալսարանը։ Բարձրագոյն ուսումը վերջացնելուց յետոյ, վերադառնում է Թիֆլիս և պարապում է ուսուց-*



Վահան Խորէնի

չութեամբ։ 1917 թ. բռնկւում է յեղափոխութիւնը և Վահան Խորէնին որպէս դաշնակցական ակտիւ մասնակցութիւն է ցոյց տալիս այդ շարժման մէջ։ «Աշխատաւոր» թերթի գլխաւոր հիմնադիրներից ու առաջին խմբագրներից մէկն է Վ. Խորէնին։ 1919 թ. նա տեղափոխուեց Երևան որպէս Հայաստանի պարլամենտի անդամ և «Երևանի Աշխատաւոր»-ի խմբագիր։

Բոլշևիկների ներս խուժումից առաջ Վահան Խորէնին ուղարկւեց Զանգեզուր, ուր և սպանւեց, 1920 թ., օգոստ. 2-ին մեծամասնականների ձեռքով։ Վահան Խորէնին բացի ուսուցիչ, խմբագիր, դասախօս, պրոպագանդիստ լինելը՝ նաև գրող էր, որի աշխատութիւններից աչքի են ընկնում—«Քրիստոսի սոցիալական ուսմունքը»,



«Այսպէս խօսեց Զրադաշտը», «Երբ և ինչպէս կը լինի սոցիալիստական յեղափոխութիւնը», «Ինչ է փիլիսոփայութիւնը», «Մեր աշխարհայեացքը», «Սոցիալիզմ և բարոյագիտութիւն» այս երկուսը միայն չէ վերջացրած։ Բացի վերոյիշեալները, Վ. Խորէնին ունի նաև հետևեալ անտիպ աշխատութիւնները՝ «Ֆր. Նիցշէի կեանքն ու փիլիսոփայութիւնը», «Շէքսպիրի կեանքն ու փիլիսոփայութիւնը», «Բարքերի ընաղանցագիտութեան հիմնաւորումը» և այլն։ Այս աշխատութիւնները ցոյց են տալիս, որ Վահան Խորէնին իր մեծ գիտական պատրաստականութեամբ, պատուաւոր տեղ պիտի բռնէր հայ սոցիալիստական ու գիտական ասպարէզներում՝ եթէ այսքան կարճատև

ու ողբերգական վախճան չունենար նրա կեանքը։

## ԲԺԻՇԿ ՅԱԿՈԲ ԶԱՒՐԻԵԱ

—

Բժ. Յ. Զաւրիևը ծնւել է Պետրոգրադում 1867 թ. Նոյն քաղաքում էլ ստացել է թէ սկզբնական և թէ բժշկական կրթութիւնը։ Բժ. Յ. Զաւրիևը դեռ ուսանող ժամանակ մեծ հետաքրքրութեամբ մասնակցում էր հայ ուսանողական ժողովներին և ուսումնասիրում հայ յեղափոխական կեանքը։ Եւ այդ կեանքը կլանեց նրան։ 1902—1903 թ. բժ. Զաւրիևը Հ. Յ. Դ. գործօն անդամներից մէկն էր հա-



Բժ. Զաւրեան

մարւում։ Սասունի ապստամբութիւնից յետոյ, նա մտնում է Նիկոլ-Դումանի խմբի մէջ, որ անցնի Տաճկաստան, բայց չի յաջողւում։ Անցնում է մի ժամանակ և բժ. Զ. որպէս ռուս բժիշկ մտնում է Տաճկաստան և հաստատւում Մուշ, քաղաքում, այստեղ գործում է երկար ժամանակ, բաց է անում հիւանդանոց։ Մուշից անցնում է Պոլիս և Եւրոպական զանազան քաղաքներ։ 1915 թ. կամաւորական շարժման մէջ մեծ մասնակցութիւն ցոյց տւեց բժ. Զ., ինքն էլ որպէս բժիշկ մեկնեց ճակատ։ Նա կռուի դաշտումն էր մինչև 1917 թ.։ Ռուսական մեծ յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ Կերենսկու կողմից նշանակւեց Տաճկահայաստանի գրաւած վայրերի փոխ-կոմիսար։



Եւ մի քանի ամսւայ գործնէութեան մէջ մեծ ժողովրդականութիւն ձեռք բերեց թէ հայերի և թէ քիւրդ ու թիւրքի մէջ։ Երբ բոլշևիկները տիրապետեցին Ռուսաստանը՝ Հիւսիսային Կովկասը կտրւեց Ռուսաստանից, Հ. Ազ. Խորհուրդը Զ. ուղարկեց Մոսկւա միջամտելու բոլշևիկների մօտ ի նպաստ Հիւս. Կովկ. մէջ գտնւող հայերի։ Միջամտութիւնը յաջող անցաւ, բայց բժ. Զաւրիևը բոլշևիկների կողմից ոլ պէս պատանդ պահւեց Մոսկւայում։

Բազմաթիւ դիմումներից յետոյ հազիւ ազատ արձակւած բանտից նա զոհ գնաց տիֆին։

## ՀԻՊԻՐԻԿ ՋՈԼԱԽԵԱՆ

—

*Հ. Զոլախեանը ծնուել է 1882 թ. հոկտեմբերի 26-ին։ Հիպերիկ են անուանել նրան մկրտութեան օրը, որովհետև հայրը, Գրիգոր Տացուն բանալով օրացոյցը գտել է այդ օրուայ սաթիւ հետևեալ գրութիւնը. «Սրբոց Հիպերիքեանց, որք ի Սամուսար կատարեցան»։*

*Սկզբնական ուսումը ստացել է Ալէքսանդրապոլի Փրկչի դպրոցում։ 1893 թ. անցնում է Թիֆլիս, մըտնում Նիկոլայեսկի քաղաքային դըպրոցը և վերջացնում այն։*

*1895 թ. մտնում է հաշւապահական կուրսերը, վերջացնելով այն, պատրաստւում և ուսուցչութեան ի-*



Հ. Զոլախեան

րաւունք է ձեռք բերում։ Մի քանի տարի էլ ուսուցչութիւն անելուց յետոյ, անցնում է Պետրոգրադ և մտնում Գիւղատնտեսական կուրսերը։ Զոլախեանը աչքի էր ընկնում իւր եռանդոտ և խելացի գործունէութեամբ դեռ ուսանողական ասպարէզում։

1916 թ. վերջացնում է բարձրագոյն ուսումը և վերադառնալով հայրենիք մեծ եռանդով գործում է գիւղատնտեսական ասպարէզում։ Մի խումբ ընկերների հետ միասին 1917 թ. նա Թիֆլիսում հիմք է դնում «Աշխատաւոր» թերթին, իր վրայ վերցնելով նրա նիւթական ապահովութեան դժւարին գործը։

Փոխադրւելով Ալեքսանդրապոլ՝ նա կարճ ժամանակից դառնում է շրջանի հասարակական-քաղաքա-



կան կեանքի առանցքը՝ թէ իբրև կոոպերատոր, թէ իբրև գիւղատընտես և թէ իբրև «Շիրակի Աշխատաւոր»-ի հիմնադիրներից մէկը, մինչև որ 1920 թ. մայիսի 14-ին զոհ է գնում պատահական մի գնդակի։

## ՄԱՄԲՐԷ ՄԱՏԷՆՃԵԱՆ

Մ. Մատէնճեանը ծնւել է 1883 թ. Երզնկայում։ 1895—96 թ. Տաճկահայաստանի կոտորածների ժամանակ գալիս է Կովկաս և անմիջապէս տեղաւորւում Ճեմարանում։

Միջնակարգ ուսումը վերջացնելուց յետոյ անցնում է արտասահման և Փարիզի համալսարանը մտ-



Մամբրէ Մատէնջեան



նում։ Բարձրագոյն ուսումը վերջացնելուց յետոյ վերադառնում է Թիֆլիս և զբաղւում ուսուցչութեամբ։ Մ. Մատէնջեանը Ներսիսեան դըպրոցում դասաւանդում էր՝ ֆրանսերէն լեզու և վերջին տարիներս նաև հայոց լեզու և գրականութիւն։

Մատէնջեանը մահացաւ թոքերի հիւանդութիւնից 1920 թ. մարտի 23-ին։

Նա անաչառ, խիստ և շնորհալի քննադատ էր, որի կորուստը հայ գրականութեան համար երկար ժամանակ անփոխարինելի կը մնայ։

# ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

*Վ. Փափազեանը ծնւել է 1866 թ. Վան քաղաքում, ուսել Գէորգեան ճեմարանում, իսկ բարձրագոյն կրթութիւն ստացել է Շւէյցարիայում։*

*Ուսանողական թւականներից Վ. Փ. «Մշակ»-ի մէջ նկարագրում էր տաճկահայ ժողովրդի կեանքը։ Նոյն թւականներից սկսեց գրել վէպիկներ ու պատկերներ, որոնց ժողովածուն լոյս տեսաւ Մոսկւայում 1891 թ.։ Վ. Փափազեանի գլուխ գործոցն են «Էմմա» վէպը և «Ժայռ» պիէսը։ Բացի գեղարւեստական գրականութիւնից Վ. Փ. աշխատել է և լրագրական ասպարիզում։ Նա*



Վր. Փափազեան

եղել է խմբագիր «Շաւիղ» թերթի Պարսկաստանում և խմբագրութեան անդամ «Արձագանքի», «Արշալոյսի» Թիֆլիսում։

Վ. Փ. ուսուցչութեան գործում և հայ ուսուցչին միայն յատուկ խեղճութեան և նեղութեան մէջ էլ Երևանում մահացաւ 1920 թ. ապրիլի 26-ին։

## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

(Ծննդեան 100-ամեակի առթիւ)

Խրիմեան Հայրիկը ծնուել է 1820 թ. ապրիլի 4-ին Վան քաղաքում։ Երեսնական թուականներին Վանում ուսումնարաններ չկային։ Նա իր ուսմը ստացաւ հօրեղբայր Խա-



Խրիմեան Հայրիկ

չատուրի մօտ։ Պատանի Խրիմեանը ինքնակրթութեան և աշխատասիրութեան շնորհիւ աւելի բան գիտէր, քան թէ դպրոցականները։ Նա լաւ ծանօթ էր եկեղեցական մատենագրութեան և հայոց հին գրականութեան հետ։

Խրիմեանը զինուորակոչութիւնից խուսափելու համար անցաւ Պարսկաստան։ Նա տեսաւ Սալմաստ, Ուրմիա, Խոյ. անցաւ Երասխ գետը, ման եկաւ Մայր-Արաքսի ափերով, «Հին հին դարուց յիշատակաց մէջ պտրելով»։ Ուսումնասիրելով Ռուսահայաստանի պատմական նշանաւոր տեղերը, Խրիմեանը անցաւ Պօլիս։ Այստեղ էլ երկար չմնաց, այլ անցաւ Երուսաղէմ։ 1854 Թ. փետրուարի 14-ին Մկրտիչ Խրիմեան՝ վարդապետ ձեռ-



նադրուեց և մնաց Վարագում։ Այստեղ տպարան հիմնեց, թերթ, հրատարակեց «Արծիւ Վասպուրականի» անունով, բացեց դպրոց, գրադարան-ընթերցարան և այլն։

1868 թ. Խրիմեան Հայրիկը Էջմիածնում ձեռնադրուեց եպիսկոպոս և վերադարձաւ Մուշ։

1869 թ. Խրիմեանը ընտրուեց Կ. Պօլսի հայոց պատրիարք։ 1876 թ. սկսեց լոյս ընծայել իր աշխատութիւնները՝ «Մարգարիտ արքայութեան երկնից», «Խաչի ճառ», «Դրախտի ընտանիք», «Սիրաք և Սամուէլ», «Հայգոյժ», «Վանգոյժ»։

1878 թ. Խրիմեան Հայրիկը մեկնեց Եւրոպա, Բերլինի կօֆէրանսին մասնակցելու։

1890 թ. տեղի ունեցաւ Գումգափուի և Էրզրումի դէպքերը, որի

հետեւանքով Խրիմեանը աքսորւեց Երուսաղէմ։

Խրիմեան Հայրիկը Երուսաղէմում ապրում էր մի գետնափոր խցում, բայց նեղ խուցը չէր նրան հալող մաշողը.— այլ հայրենիքի կարօտը, ժողովրդի ցաւերը։

—«Հայրենիքի կարօտը ինձ կը մաշէ... Արծիւն ճնճղուկի վանդակի մէջ սեղմեր են, աս ալ կանցնի»... յաճախ կրկնում էր նա։

Եւ իսկապէս դա էլ անցաւ և 1893 թ. Խրիմեանը ձեռնադրւեց Ամենայն Հայոց Կաթողիկոս։ Կաթողիկոսական ասպարիզում նոյնպէս մեծ գործեր կատարեց Խրիմեանը և 1907 թ. վախճանւեց։ Իր ժողովրդասէր գործունէութեան համար, նա դեռ վարդապետ ժամանակւանից Հայրիկ անունը ըս-



տացաւ և մնաց հաւատարիմ իր այդ կոչումին ոչ այնքան իբրև հոգևորական, որքան իբրև յեղափոխական ու ժողովրդական աննըկուն տրիբուն։

## Հ. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

(1820—1920)

—

Վենետիկի Մխիթարեան միաբանութեան ամենագրաւիչ դէմքերից մէկն է Հ. Ղեւոնդ Ալիշանը։ Նա ծնւել է 1820 թ. յուլիսի 18 ին Պոլսում։ Մկրտութեան անունն է Քերովբէ։ Գնալով Վենետիկ Քերովբէն մտնում է Մխիթարեան միաբանութեան մէջ։ 1836 թ. ընդու-



Ալիշան



նեց կրոնաւորի սքեմ և կոչւեցաւ Ղևոնդ—1840 թ. ձեռնադրւեց քահանայ: 1843 թ. հիմնւեց «Բազմավէպ» թերթը Գաբ. վարդ. Այվազովսկու նախաձեռնութեամբ, որի գլխաւոր աշխատակիցն եղաւ Հ. Ղևոնդ Ալիշանը—Նահապետ անուով: 1848 թ. յեղափոխութեան ժամանակ նա դարձաւ վանք և «Բազմավէպ»-ի խմբագրութիւնն իր ձեռքն առաւ (1849—1852 թ.):

Հայերէն ձեռագրերի ուսումնասիրութեան համար 1852 թ. Բերլինի և Վիէննայի վրայով ուղևորւեց Լոնդոն: 1853 թ. Մուրատեան վարժարանի տեսչի օգնական նշանակւեց: 1872 թ. վանք գնաց, ուր և մնաց մինչև մահը: Ամբողջ երեսուն տարի մնաց վանքի մէջ, ըզբաղւելով գրականութեամբ: Այս

շրջանի մէջ հրատարակեց իր վիթխարի գործերը, Սիսուան, Այրարատ, Սիսական, Շիրակ, Հայապատում, Հայբուսակ և ուրիշ մեծ ու փոքր հատորներ։ Այդպէս անխոնջ ծառայելով ժողովրդին կնքեց իր մահկանացուն 1902 թ. նոյեմբ. 9-ին։ Անցեալ տարի լրացաւ նրա ծննդեան հարիւրամեակը։

Վ Ց ՈՒԽՏ Ա ԵՆ

Ա Ի Բ ...ՆՆԵՐԻ

խմբագրած

# „ԼՈՅՍ"

ամսի 1921 թ. օրաց.

Գունա... բո...վանդակը, հայկական ... նկարած՝ Հայաստանի ...ական ու հասարակական գործիչների ... նմանկարն է պատկերացնում

ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑԻ ԳԻՆԸ 1000 Ռ.

Դիմել՝ Тифлис, Большая Зан-кская 23, А. Томяну

Типогр. „Прогрессъ" Погосова.

6702
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0032012